# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վերին Արտաշատ, 6-33-30, verinartachat@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 28

ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.11.2019թ. N 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական Ինքնակառավարման մասին օրենքի 14-րդ հոդվածի 6- րդ կետով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝ Հաստատել Վերին Արտաշատ համայնքի ավագանու 08.11.2019թ. N 7 նիստի օրակարգը՝

1. Վերին Արտաշատ համայնքի 2019թ.-ի 3-րդ եռամսյակի բյուջեի կատարման աշխատանքների մասին
2. Գույքահարկից արտոնություն սահմանելու մասին
3. Մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին
4. Կառուցապատման իրավունքով հողամաս հատկացնելու մասին
5. Գույքի վաճառքի թույլտվություն տալու մասին
6. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
7. Բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ
ԵՍԱՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ
ՍԱՐԳՍՅԱՆ ԹՈՐՈՍ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔԱՋԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վերին Արտաշատ, 6-33-30, verinartachat@mail.ru
verinartashat.ararat@mta.gov

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 29

### ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ.-Ի 3-րդ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 38 - րդ հոդվածի 1-ին մասով ավագանին

Որոշում Է՝Ընդունել ի գիտություն Վերին Արտաշատ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը համայնքի 2019թ. բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին :

| ՆՈ | Եկամտատեսակ | Պլան /հազար դրամ/ | Փաստացի կատարված /հազար դրամ/ | Փաստացի կատ. % |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 21,793.40 | 6,938.48 | 31.8 |
| 2 | Գույքահարկ փոխադրամիջոցներից | 15,078.00 | 10,956.67 | 72.6 |
| 3 | Գույքահարկ շենքերի համար | 1,422.00 | 938.80 | 66.0 |
| 4 | Տեղական տուրք | 770.0 | 977.50 | 126.9 |
| 5 | Հողի վարձակալություն | 1,413.50 | 924.0 | 65.3 |
| 6 | Ծնողական գումար | 7,700.00 | 4,991.60 | 64.8 |
| 7 | Դոտացիա | 57,890.10 | 43,417.6 | 75 |
| 8 | Սուբվենցիա | 1,867.00 | 1,245.30 | 67.5 |
| 9 | Աղբահանության վճար | 2,500.00 | 1,261.16 | 50.4 |
| 10 | Ընդամենը | 110,684.00 | 80,148.99 | 72.4 |

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

ԵՍԱՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԹՈՐՈՍ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔԱՋԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վերին Արտաշատ, 6-33-30, verinartachat@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 30

### ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻՑ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Գույքահարկի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով `ավագանին

Որոշում է - Սահմանել գույքահարկի արտոնություն Վերին Արտաշատ համայնքի բնակիչ Արմեն Վարդանյանին պատկանող ՎԱԶ- 2105 մակնիշի 25ՏՍ708 պետհամարանիշի ավտոմեքենայի նկատմամբ 15600 դրամ :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

ԵՍԱՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԹՈՐՈՍ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔԱՋԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վերին Արտաշատ, 6-33-30, verinartachat@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 31

### ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական Ինքնակառավարման մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ և 6- րդ կետի պահանջներով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է ՝

1. Վերին Արտաշատ համայնքում ստեղծել մշտական գործող հանձնաժողովներ ավագանու անդամներից՝

ա / Համայնքի զարգացման և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով

Հանձնաժողովի նախագահ՝ Գրիգոր Եսայան

Հանձնաժողովի անդամներ՝ Թորոս Սարգսյան

Կարեն Ավետիսյան

բ / Պաշտպանության , անվտանգության , գիտության , կրթության , մշակույթի , երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գեղամ Սարգսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արարատ Միքայելյան

Գրիգոր Եսայան

Աշոտ Գրիգորյան

գ / Քաղաքաշինության , հողօգտագործման , շրջակա միջավայրի պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արամ Ղազարյան

Աշոտ Գրիգորյան

Քաջիկ Վարդանյան

Արային Աթոյան

2. Հաստատել մշտական գործող հանձնաժողովների աշխատակարգը համաձայն հավելված 1- ի :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

ԵՍԱՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԹՈՐՈՍ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔԱՋԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված 1
Վերին Արտաշատ համայնքի ավագանու
08.11.2019 թ. թիվ 31 որոշման

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

### Գլուխ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և համայնքի բնակչության բարեկեցության, բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ իրականացնում է ժողովրդի իշխանությունը, օրենքի շրջանակներում ապահովում համայնքային խնդիրների լուծումը և տնօրինում համայնքի սեփականությունը:

Համայնքի ավագանին իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, իր որոշմամբ ստեղծել է մշտական գործող հանձնաժողովներ:

1. Հանձնաժողովները ստեղծվում են որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ համայնքի ավագանուն եզրակացություններ տալու նպատակով:
2. Հանձնաժողովների անդամների կազմը հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ:

***Նպատակը***

1. Սույն աշխատակարգն ընդունված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա :
2. Սույն աշխատակարգը նպատակաուղղված է Վերին Արտաշատ համայնքի ավագանու հանձնաժողովների և անդամների գործառույթների արդյունավետ կատարմանը , ինչպես նաև նրանց փոխգործակցությանը համայնքի ղեկավարի (այսուհետ՝ համայնքապետ) և համայնքապետարանի աշխատակազմի հետ տեղական ինքնակառավարման իրականացման գործում:
3. Սույն աշխատակարգը կարգավորում էհանձնաժողովների նիստերի անցկացման վայրը, կարգը, ինչպես նաև ավագանու որոշումների նախագծերի ներկայացման, քննարկման, ընդունման ու հրապարակման կարգը:
4. Իրենց գործունեությունն իրականացնելու ընթացքում հանձնաժողովները կարող են աշխատա նքի մեջ ներգրավել փորձագետների և խորհրդատուների :

***6.Հանձնաժողովի աշխատանքների համակարգումը՝***

- Մշտական հանձնաժողովի աշխատանքները համակարգվում են ընդունված աշխատակարգի միջոցով
- Մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են, եթե դադարել են նրա որպես ավագանու անդամի լիազորությունները:
- Հանձնաժողովի նախագահը՝
  ա) նախապատրաստում և վարում է հանձնաժողովի նիստերը.
  բ) գումարում է հանձնաժողովի արտահերթ նիստերը.
  գ) հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը.
  դ) ավագանու նիստին է ներկայացնում հանձնաժողովի եզրակացությունները և առաջարկությունները ուսումնասիրվող հարցի վերաբերյալ .
  ե) ընթացք է տալիս և պատասխանում է հանձնաժողովին ուղղված դիմումներին.
- Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ ըստ ձայների մեծամասնության :

***7. Հանձնաժողովների նիստերի հրավիրման կարգը.***

- Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում համայնքի ավագանու նստավայրում : Այլ վայրում հանձնաժողովի նիստ կարող է անցկացվել հանձնաժողովի որոշմամբ:

- Հանձնաժողովի արտահերթ նիստը գումարվում է ըստ անհրաժեշտության՝ նիստը նախաձեռնողի սահմանած ժամկետում, համաձայն հանձնաժողովի աշխատակարգի:

**7. Հանձնաժողովների նիստերի անցկացման կարգը**

- Հանձնաժողովի նիստում կարող են ներկա գտնվել ավագանու անդամները, համայնքապետը և հանձնաժողովի կողմից հրավիրված այլ անձինք:
- Հանձնաժողովի որոշմամբ հրավիրված անձինք տեղեկացվում են քննարկումներից առնվազն երեք օր առաջ:

***8. Հանձնաժողովի նիստում քննարկումների կազմակերպման և որոշումների ընդունման կարգը***

- Հանձնաժողովի նիստը սկսվում է օրակարգի հաստատումով: Մինչև օրակարգի հաստատումն այլ հարցեր չեն քննարկվում:

Նիստում հարցերը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ՝

ա) հիմնական զեկուցողի ելույթը.
բ) հարցերի հիմնական զեկուցողին.
գ) հարակից զեկուցողի ելույթը (եթե այդպիսիք կան).
դ) հարցեր հարակից զեկուցողին.
ե) մտքերի փոխանակություն.
զ) հիմնական զեկուցողի եզրափակիչ ելույթը.

- Հանձնաժողովի նիստում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է հարցի քննարման ավարտից հետո:
- Նիստում քվեարկությունները կատարվում են միայն տվյալ հանձնաժողովի անդամների առաջարկությամբ:
- Հանձնաժողովի անդամը կարող է հրաժարվել քվերակությանը մասնակցելուց:
- Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:
- Նիստի արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

***Աշխատակակարգի փոփոխությունները***

1. Սույն աշխատակարգը կարող է փոփոխվել համայնքի ավագանու որոշմամբ :
2. Ցանկացած կանոնակարգային փոփոխություն պետք է համահունչ լինի Հայաստանի Հանրապետության Սահմանդրությանը , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և այլ իրավական ակտերին :

Աշխատակազմի քարտուղար Նուշիկ Պետրոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնք
6-33-30, verinartachat@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 32

## ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով `ավագանին որոշում է

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն հանդիսացող 0958-0003 և 0014-0067 կադաստրային ծածկագրերիի տակ գտնվող Մյասնիկյան փ. 11/3 հասցեում հաշվառված ընդհանուր օգտագործման 0.0054 հա հողամասը տրամադրել տեխսպասարկման կետի կառուցման համար ` համաձայն ներկայացված հատակագծի :
2. Տրամադրման ժամկետ սահմանել 99 տարի:
3. Մրցութային կարգով , կառուցապատման համար հատկացվող 0.0054 հա հողամասի մեկնարկային գին սահմանել 7000 դրամ :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

ԵՍԱՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԹՈՐՈՍ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔԱՋԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐԶ Վ. ԱՐՏԱՇԱՏԻ ... "04200728"

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վերին Արտաշատ, 6-33-30, verinartachat@mail.ru
verinartashat.ararat@mta.gov

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 33

### ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ Է `

1. Վերին Արտաշատ համայնքի ,, Լուսնթագ ,, ՀՈԱԿ մանկապարտեզի երկրորդ հարկի վերանորոգման ժամանակ հատակի տախտակները , որոնք այլևս պիտանի չեն օգտագործման ուղղակի վաճառել որպես վառելանյութ մանկապարտեզի աշխատակիցներին :

2. 1 խմ - ի արժեքը սահմանել 20000 դրամ :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

ԵՍԱՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԹՈՐՈՍ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔԱՋԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վերին Արտաշատ, 6-33-30, verinartachat@mail.ru
verinartashat.ararat@mta.gov

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 34

### ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով և հիմք ընդունելով ,, ԱԿԲԱ - ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ " ՓԲԸ - ի թիվ 22/19-25 դիմումը՝

Ավագանին որոշում է `

1. Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքի Կոմիտասի փ. թիվ 41 հասցեում գտնվող 0.12 հա / սեփականության իրավունքի գրանցման վկայական ` 28042014-03-0003 / հողամասը ճանաչել համայնքային սեփականություն :

2. Կատարել պետական գրանցում :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

ԵՍԱՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԹՈՐՈՍ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔԱՋԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վերին Արտաշատ, 6-33-30, verinartachat@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 35-Ն

## 2019 թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Նորմատիվ Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի և « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ՝ ավագանին

Որոշում է - Հաստատել Վերին Արտաշատ համայնքի 2019 թվականի բյուջեի փոփոխությունները՝

1. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 08 02 05 52 ծրագրի 4239 հոդվածին հատկացնել 50.0 հազար դրամ

2. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 01 01 01 51 ծրագրի 4232 հոդվածին հատկացնել 105.0 հազար դրամ ։

3. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 01 06 01 55 ծրագրի 4823 հոդվածին հատկացնել 25.0 հազար դրամ

4. 01 01 01 51 ծրագրի 5122 հոդվածից 09 06 01 51 ծրագրի 5113 հոդվածին հատկացնել 500.0 հազար դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ

ԵՍԱՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԹՈՐՈՍ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔԱՋԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ